

Այդ մասին ունի առ Հ. Մինաս Նու-
րիխան ուղղուած շահեկան և անտիպ
նամակ մը, որմէ կը քաղեմ հետեւեալը.

«... Այսօր տօն է Վարդանանց, և յիշեա-
լիք ի դէպ ժամուշ, ի սմին ժամուշ քնկարաց
և գիր մի ի Կ. Պօլսէ, յորտեմ նշանակեալ
էր Յիշատակարան մի գրեալ ի Համլէն յա-
նապատու Ս. Խաչիկ Հօր և «Սոչրք Վար-
դանանց նշխարաց, որ ստոռ եղեալ են ի
պարծանս և ի պանդանոտրիւն գաշաւիս Հա-
մաշինոյ»։ Գիշտ նշխարացն, գէր տեղոյն
և անապատին կամ վանոց Խաչիկ Հօր և
Վարդանանց, էր և է իմ ցանկոտրիւն բազ-
մամեայ. արդեօք կատարեցի՞ միւնչ կենդանի
իցեմ⁴»։

Վերոյիշեալ նամակի դիտելի կէտերն
են ուրեմն ա) Համաշէնի մէջ Վարդանանց
մասունքներու գոյութիւն մը, եթէ անցեալ
ժամանակի իմաստով Համաշէնի այդ։ Ան-

(4) 12 Փետր. 1885. (Գիւտն Միւ. Վ. Կենտկոյ).
(5) Նուագը, Հար. Գ. էջ 305.



ծանօթ ըլլալով մեզի Յիշատակարանի
գրութեան թուականը՝ չէ կարելի աւելի
որոշ բան մը ըսել։ Բ) Նամակագիրը՝ ծա-
նօթ Նահապետի հայրենասէր զգացումնե-
րուն ու բաղձանքներուն՝ ուզած է Վար-
դանանց տօնին օրը հաճելի անակնկալ
մ'ընել հեռուէն, զրկելով պանծալի նա-
հատակներու մասունքներուն շուրջ տեղե-
կութիւն մը պարունակող Յիշատակարան
մը։ Գ) Յոյց կու տայ յատկապէս Ալիշանի
երկարամեայ ցանկութեան ուժգնութիւնը
անոնց մասին, որ մինչեւ անգամ կը
փափաքի մասունքներու գիւտը լսել իր
կենդանութեանը, և այդ մեծ միտքարու-
թիւնն ունենալ իր «Արդ արձակեալ»էն
առաջ։

Հոս կարծես կը կրկնուին մեր աւանջին
մէջ իր այս տողերը.

Ահ, ո՛հ... լըսէ՞ք ոգիք Հայկազեանց
Նահապետիս լըսէ՞ք հառաչանք...
Լըսեմ լըսեմ ես ըզձայն հարանց,
Ահա շարժին բացուին գերեզմանք⁵։

Հ. Դ. ՏԱՅԵԱՆ

Ս. ՂԵՒՈՆԴ ԵՐԷՑ ՎԱՆԱՆԴԱՑԻ

Վարդանանց 1500-ամեակին առթիւ կու տանք մեր ընթերցողներուն՝ Հ. Ղեւոնդ Ալիշանի
Ս. Ղեւոնդ Երէց Վանանդացիի վրայ գրած հոյակապ ճառին թարգմանութիւնը, գնելով հոս
մաս մը միտայն, մնացած մասը թողնով «Բազմավէպ»-ի յաջորդ թիւերուն։ Ալիշան իր այս հրա-
շունչ ճառին մէջ գրած է իր բովանդակ սիրտը, մաքին կորովը, հոգւոյն խանդավառանքն ու
սէրը իր անուանակիր մեծ Սուրբին, որ ոգին էր Աւարայրի Դիւցազններուն։ Տեղագրական գոր-
ծերէն «Աւարատ» հատորին մէջ (էջ 90-106) գետեղած է զայն, Վանանդ գաւառի վրայ խօսած
ատեն, չկարենալով զսպել իր հիացումը այն մեծ դէմքին որ Վանանդի փառքն ու պատիւը եղաւ։

ԱՐԱՐԱՅԻՆ ընդունուած զանազան ձիւ-
քերուն և շնորհքներուն մէջ երեք
հատ կան, որով մարդս մեծ և հրաշալի
կը հանդիսանայ իր նմաններուն աչքին,
և մահկանացուներու ասպարէզին սովո-
րական սահմաններէն՝ գերազանցելով,
կ'ապշեցնէ ազգերը և դարերը։ Յիշա-
տակարաններ, դիւաններ և արձանագրու-
թիւններ վեհագոյն կը համարին այնպի-
սիները որոնք սրտի, մտքի և հոգւոյ զօ-
րութեամբ նշանաւոր եղած են։ Եթէ
ազնիւ, օրինաւոր և դժուարին նպատակ
մը զրած՝ դիմէ անոր իր բոլոր զօրու-
թեամբը իրականացնելու զայն, և երբ
հասնի ամբողջացնելու կամ մահովը ար-
գիւտի՝ քաջ և արի կը համարուի, կը գով-
ուի և կը պատուուի այն սիրտը։ Եւ եթէ
տարբերութեան ծանծրութիւնը և համարութիւնը
որ զինքը կը պատեն, և որով ինքն իսկ
կազմուած է, կամ բնութեան օրէնքը և
ոյժը կերպով մը պատուելով աշխատի
թափանցել և նոր բան մը երեւան հանէ,
կամ իրմէ առաջ եղողներուն յայտնած-
նելը յիշողութեան մէջ ընդարձակօրէն
ամբարէ, գիտուն և խմաստուն կը ճանչցուի
և կը մեծարուի այն միտքը։ - Իսկ երբ
այս երկուքին մէջ զօրաւոր ըլլայ կամ
ոչ, սակայն գերագոյն փափաքով մը կամ
բերումով իր արարչին և ստեղծողին դիմէ,
աստուածութեան նմանելու հրաշագան-
կութանքով, իր հոգեղէն կազմութեան տա-

րողութեան չափով, ազնիւ և սարք կը
խոստովանուի և կը պաշտուի այն հոգին։
Առաքինի Սիրտը, Միտքը և Հոգին. կամ
Արիւթիւն, Իմաստութիւն և Սրբութիւն
երբեակ սքանչելիք մարդու մէջ, որոնց
երկիր պատուանդանը կ'ըլլայ, երկինք
երկիր պատուանդանը կ'ըլլայ, համար
ալ օթեման։ Հայրենիքի օգտին համար
մանաւանդ նշանաւոր հանդիսացողները
կիրթ և անբաղաքալիւթ ազգեր կը հոգա-
կնէ զանոնք զանազան կերպերով, ինչ
կեն յայտնի է ամէնուրեք։ Իմաստուններուն
որ վրայ կը հիանան և կը պարծին անոնք՝ որ
իմաստութեան ճաշակն առած են։ Սուր-
բեմը՝ ազնուագոյնները մարդերու մէջ, եկե-
ղեցին ու երկինք կը տօնեն և պիտի տօ-
նեն՝ երբ նոյնիսկ լռեն քնարները, յու-
շարձաններ փշրուին և դարեր և ժամա-
նակներ դադրին։


Թող համախմբուին զմայլողներու այս
երեք խումբերը սքանչանալու համար հազ-
ուագիւտ ու չնաշխարհիկ այն անձերու
վրայ, որոնք այդ երեք հրաշալի ձիւքերը՝
արիւթեան, իմաստութեան և սրբու-
թեան միացուցած իրենց մէջ՝ կը գերա-
զանցեն վեհագոյնները վեհագոյններու մէջ։
Եւ ինչո՞ւ երկրիս ազգերու մէջ ի զուր
շրջինք ու փնտռենք այդպիսի դէմք մը,
քանի որ մեր հայրենիքի մէջ կայ Վա-
նանդացի Երէց մը, Ղեւոնդ Երէցը։ Շատոնց
արդէն Հայաստանեայց եկեղեցին իր սուր-
բերուն հետ կը տօնէ զինքը, և ազգային-

Սրբոյ շնորհքը, երկնաւոր և երկրաւոր իմաստութեամբ լեցնելով, և անոնց հետ և անոնցմէ ծնած անվախ արիւթեամբ օժտուած, և երկուքին հետեւանքով՝ առատ և զօրաւոր խօսքի տէր՝ սքանչացնելու և բորբոքելու համար հլու լսողները, հերքելու ու պապանձեցնելու ճշմարտութեան հակառակորդները: Եւ այս ամէն բանին վրայ՝ տեսնուեցաւ իր վրայ ժիր և անխռով գործունէութիւն մինչեւ ծերութիւնը, մինչեւ չարաչար խոշտանգուամբ վաստակաբեկ մարմնոյն, մինչեւ յետին շունչը:

Հոգւոյն բնածին կամ երկնատուր բեղմնաւորութեան առաջին օժանդակը եղաւ հաւանօրէն ընտանեկան կրթութիւնը, գուցէ իրեն նման օծուն ծնողներէ ստացած, և աւանդական սրտի՝ քաջութիւնը իր տոհմին՝ բացի աւագակութեան ոգիէն, զոր իբր քաջագործութիւն կը կատարէին յօժարութեամբ վանանդացիները, և իբր ուղիղ գործ՝ ախորժեւի էին իրենց: — Աւրգեօք իրեն մէջ ալ այն սուրբ աւագակութեան եռանդը կար հոգիներ որսացող Պօղոս առաքեալին՝ որուն շատ քաներու մէջ նման եղաւ, եռանդովը, համարձակութեամբը, ճարտարխօսութեամբը, հնարագիտութեամբը, նաեւ բանտով ու ծեծով, և հուսկ՝ սուրով մեռնելով: Իր աշխարհ գալը և իր առաջին տարիները զուգադիպեցաւ հայկական թագաւորութեան խաղաղ վերջալոյսին հետ՝ վաւարապուհի խոհեմազարդ թագաւորութեան օրերուն, զոր անշուշտ իր ծննդավայրին՝ Իջեւանից գիւղին մէջ վայելեց: Եւ հայերէն գրերու գիւտէն առաջ պէտք էր որ իր քահանայական կարգին պահանջին համաձայն, — և կը կարծեմ որ զրոյց գիւտէն առաջ ընդունած ըլլայ, — վարժած ըլլայ ասորի կամ յոյն լեզուի, եկեղեցւոյ պաշտամունքը կատարելու համար, ի սպաս դնելով իր հոգւոյն երախայրիքը, և եռանդուն սրտին կայտառ կայծերը ծաւալելով իր բարեպաշտ հայրենակիցներուն հոգիին մէջ, հայրաբար անոնց վրայ աշխատելով,

ինչպէս կը պահանջէր քահանայական իր աստիճանը և կը սորվեցնէր պարկեշտակրօն ամուսնութիւնը, իբր փորձառու մարդ՝ կարեկցելու ամէնուն կարօտութեան և վշտին, որոնց համար յետոյ այնքան մեծ խնամքով կը նուիրուէր կեանքին ամբողջ օրերուն: Փաստ մ'է այս շատ մը փաստերէն՝ իր չքնաղ կենցաղավարութեան ամէնուն հետ, որով գերազանցեց քան իրեն երիցակից քահանաները և քան եպիսկոպոսները:

Իսկ երբ հայերէն տառերու և դպրութեան գիւտին աւետիսը հնչեց, որով ասպարէզ կը բացուէր գիտութիւններու, մանաւանդ եկեղեցական ուսումնաւորութեան, արդեօք այնքան ցնծութեամբ կը խայտալինչպէս այս երիտասարդ երէցը, որուն մտքի և սրտի եռանդը չպաղեցաւ բնաւ հասակով՝ իր բարեւաւորութեանց և ոչ մէկ մասին մէջ: Չեմ տարակուսիր որ իր երկու ընտանիքներն ալ, մարմնաւորն ու հոգեւորը, ժամանակ մը հաւատարիմ անձերու խնամքին յանձնեւէն ետքը, և չքաշուելով դեռաբուսիկ երիտասարդներէն՝ յարակիր թ ու մտավարժ, հասակն առած Պետրոսի նման կը փութար դեռահասակ Յովհաննէսի հետ հաւասար մրցակցութեամբ՝ վազել մտաւոր յարութեան տաճարը, և աւելի ներսը մխիլ քան անխորժ տղաքը՝ իմաստութեան և գրքերու խորը, և անցնիլ զանոնք՝ հասուն խելքովը: Ստուգիւ պէտք է որ հաւատանք և ուրախանանք մեծապէս այս բանին համար, որովհետեւ հոս է որ առաջին անգամ կը յայտնուի Ղեւոնդ պատմութեան գրքերուն մէջ, և առաջնութիւնը ստացած կը տեսնուի քաջիմաց Մեսրոպայ նորակազմ վարժարանին մէջ, ոչ այնչափ հասակին՝ որչափ իր վարքին և մտքին շնորհիւ, պարագլուխ ըլլալով հայութեան ամէնէն պանծալի խումբին, ուշեղ և մտացի, երկարօր և փափկաձայն ընտրեալ այն տղոց մէջ, ինչպէս որ գիտէր ընտրել բոլոր Հայոց սահմաններու մէջէն մեծ հայրա-



պետն Սահակ, գերազանցողը հելլէն Մովսէս Խորենացի⁹ կը պատմեն թէ Մեսրոպ Յունաց վարժարանները տարած միջոց ուսման և թարգմանութեան համար ընտրուածները, երբ հրաւէր ստացաւ կայսերական քաղքէն, աշակերտներուն բազմութիւնը տանելով Մելիտինացոց քաղաքը, կը յանձնէր քաղքին եպիսկոպոսին՝ որ Ակակ կը կոչուէր, և աշակերտներուն զլխաւոր կը թողուր զայն՝ որուն անուանը Ղեւոնդիս էր, հաւատարիմ և ճշմարտապաշտ մարդ¹⁰: Չքնաղ վկայութիւն տալու մարդ:

Բայց մեծագոյն պատիւը ամէնուն մէջէն նախ և միայն ինքը վարդապետ կոչուիլն է, և ձեռքին տակ աշակերտ ունենալը մեր համբաւաւորներէն, եթէ ոչ նոյն ինքն պատմահայր Մովսէս Խորենացին, սակայն անոր եղբայրը՝ հռետոր կամ վերականգնող Մամբրէն, և թէոգորոս երթողը, ինչպէս որ կը վկայէ Արծրունեաց բազմա հմուտ պատմագիրը: Իրեն աշակերտակիցն

իսկ կորին և աշակերտներու գլուխը՝ Մովսէս Խորենացի⁹ կը պատմեն թէ Մեսրոպ Յունաց վարժարանները տարած միջոց ուսման և թարգմանութեան համար ընտրուածները, երբ հրաւէր ստացաւ կայսերական քաղքէն, աշակերտներուն բազմութիւնը տանելով Մելիտինացոց քաղաքը, կը յանձնէր քաղքին եպիսկոպոսին՝ որ Ակակ կը կոչուէր, և աշակերտներուն զլխաւոր կը թողուր զայն՝ որուն անուանը Ղեւոնդիս էր, հաւատարիմ և ճշմարտապաշտ մարդ¹⁰: Չքնաղ վկայութիւն տալու մարդ:

(9) Մ. Խորենացի, Գ. Ե. Ե.

(10) Կորին:

շատ աւելի եւս։ Այնպէս որ տարիներ վերջ ալ, երբ երկրորդ անգամ Մեսրոպէ վերակացու կը զրուէր աշակերտներու խումբի մը Շաղազումից վիճակին (Կարնոյ սահմանակից) ապահով և հովանաւոր մէկ կողմը, ուսման փափաքով կը մերժէր ուսուցչութեան պատիւը, և լսելով որ իւր կրտսեր աշակերտակիցները Յովսէփ և Նզնակ կը դեգերին Եղեսիոյ դիւանները և Բիւզանդիոնի մէջ, հելլէն լեզուի աւելի հմտանալու, գրչագիր մատենաներ փնտռելու և թարգմանելու, կը թողուր վարդապետական գաւազանը, և ճամբորդի ցուպն առնելով կը նախընտրէր դարձեալ համաբակ դառնալ, միսիլ ուսման խորը, ոչ այնքան յաղթական ըլլալու, որքան անոնցմով յղիանալու։ Հաւատարմութեանը վկան՝ Կորիւնը՝ իրեն հաւատարիմ ընկեր առած՝ միասին կը փութային կը ճեպէին և իրենցմէ կանուխ դէպի Բիւզանդիոն զիմող Արձան Արծրունիէն և Յովհան Եկեղեցացիէն առաջ հոն կը հասնէին։ Կը մեծարուէր միւսներուն հետ մայրաքաղքին եպիսկոպոսապետէն, և կը միանային քաջակիրթ և յստակաբան Նզնակին՝ «իբր իրենց ընտանի և սննդակից եղբորը, և կը վերջացնէին հոգեւոր պէտքերնուն խնդիրը¹¹»։ — Տարիներ ամբողջ աշխատեցան մեր անյայգ ուսումնասէրները գրական գանձերու ամէնէն ճոխ քաղքին մէջ, ոչ միայն իմաստասիրական այլ և աստուածաբանական ուսումներու, որով պատեհ առիթը ունեցան ճանչնալու այդ ժամանակին կենդանի աղբիւրները, այսինքն է նշանաւոր հոգեկոս հայրապետները, Նեստորի քրիստոսամարտ մոլորութեան յաղթահարիչները Եփեսոսի սիւնհոգոսին մէջ, ինչպիսիք էին մեծն Կիւրեղ Աղեքսանդրացի, Յոբնաղ,

(11) $\Psi_{\text{prop}} \in \Sigma$

(12) *Uspushno* † 434*t* *muyrbl* 12*t*,
 (13) *k...t...*

(13) *tsupbasyt*, Գ. ԿԱ.

Թէէողլիտոն անկիւրացի և ալլն: Թէ ան-
ձամբ ալ ալդ ժողովլ մէջ գտնուեցան մեր
Թարգմանիչները իրրիւ ունկնդիր կամ
նուրբակ, ստոյգ բան մը չունինք ըսելիք,
սակալն հաւանական է. ոչ ալ Թէ Ղե-
ւոնդի ու Կորիւնի ժամանեւուն՝ աւարտած
ու ցրուած էր ժողովը, ինչպէս որ կարծել
կու տայ Մաքսիմոսի անոնց ըրած ընդու-
նելութիւնը, վասն զի Նեստորի հռա-
ցուելէն վերջ՝ ասիկա նստաւ Կ. Պոլսի
աթոռը, և այս եղաւ 431ի հոկտեմբերին:
Իսկ միւր Թարգմանիչներուն զարծը ի
Հայաստան տեղի ունեցաւ Պրովկի հայ-
րապետութեան օրերուն, որ յաջորդեց
Մաքսիմոսի երկուր ու կէս տարի վերջ¹²,

Այն տարին (434) կամ անկէ վերջ, կը դառնար Ղեւոնդիոս Թարգմանիչներու գրասէր և գրաբեր պարագլուխը, Յեսուի նման բերելով ընտրութեան կշիռներու լծակով աւետեաց լրտեսութեամբ բերքերէն ամէնէն պարարտը, եկեղեցական և կանոնական գրքերը, Եփեսոսի և անկէ առաջ հղած ժողովներուն, և ամէնէն աւելի՝ մեծ և պատուական ողկոյցը Աստուածաշունչ Գրքերու ստոյգ և հաստատուն օրինակները, և զանեւով իրենց վարդապետները «Մեծն Սահակը և Մեսրոպը յԱշտիշատ Տարօնոյ, տունին նաեւ (Պրովիլի և Կիւրղի) Թուղթերը և ժողովին կանոնները¹³» և «Ս. Հայրերուն առջեւ կը դնէին սուրբ եկեղեցւոյ իրենց բերած կտակարանները¹⁴»։ — Ուրչափ մեծ և պատուական էր այս ընծան, կամ Թէ հաճոյ է ըսել, հելլենական աւարը, քան հրաշակերտ ոսկեզօծ ձուլածոյ արձանները Սկիւլիայի և Դիպիրիոսի¹⁵ արուեստագէտներուն, որոնք մեր Ալտաշէս և Տիգրան աշխարհակալները 550 տարիներ առաջ, գերելով գերփելով Ելլադան, փոխադրեցին

(14) $\mathcal{H}^{n,p}(\mathbb{R}^n)$

(15) Խորենացի, Բ. ժ.Բ.

Հայաստան: Որքան անկորուստ հարսւ
տութիւն շահեցաւ մեր դպրութիւնը՝ չքնադ
և անհամեմատ թարգմանութեամբ Աս
տուածաշունչ զբքերուն՝ Եօթնամանից այդ
ստոյգ և ընտիր յոյն օրինակներէն, և
ինչպիսի՝ անեղծ արձան կանգնուեցաւ
հայերէն լեզուի: — շատոնց և շատերէն
վկայուած է այս՝ ամէնրէն որ քիչ մը
զբաղած են մեր ազգային մատենագրու
թեամբ, մերկններէն և օտարներէն, զոր
աւելորդ է երկրորդելը: Կ'ուզեմ սակայն
յօժարութեամբ յիշեցնել թէ այս մեծ ըն
ծայարեութեան մէջ առաջնորդ և նուի
րակներուն պէտք եղաւ Ղեւոնդ, ինչպէս
կարելի է գուշակել իր աւագութենէն,
բայց անուամբ ալ յիշուած է մեր միջին
պատմիչներէն մէկէն, թէ վերոյիշեալ Ս.
Գրքի օրինակները բերուած են «ի Սրբոյն
Ղեւոնդէ, և յայլոցն՝ ի Կոստանդիական
քաղաքէն»¹⁶ » . և արուեստն պաշտելի
ձեռքերէ իրբեւ յետին հաճոյական նուէր,
մեր Թորգոմի տան դպրութեան երկու նա
հապետներուն, որոնք ալեւորեալ և հա
սակով ու աշխատութեամբ բեռնաւորեալ
չղանդադեցան « դարձեալ թարգմանուածը,
անգամ մը փութանակի թարգմանուածը,
հանդերձ նոքօք՝ վերստին յօրինել նորոգ
մամբ»¹⁷ », և անկէ վերջ ալ եւս կրնային
գոհութեամբ խնդրել Աստուծոյ յաւիտեանից.
արձակուրդը ի խաղաղութիւն յաւիտեանից
մանաւանդ որ, — այնպիսի կարեւոր ժող
վեցին խումբ մը եւս ժրագոյն պատանի
ներու, զրկելու « յԱզգեքսանդրիա, ի լեզու
պանծալի, ի ստոյգ յօգանալ ճեմարանին
վերծանութեան»¹⁸ » . — յոյս սակայն չու
նենալով թերեւս ապրելու ձեռքերու կը յան
դարձը, ճարտարագոյն ձեռքերու և անոնց մէջ
ձնէին իրենց ձեռնարկը: և անոնց մէջ
ամէնէն աւելի վատահելի առաջնորդի՝
Ղեւոնդ երէցին:

$$(16) \quad U_{\mu\nu\eta l^h l^i}$$

(16) $U_{\alpha\beta\gamma\delta\epsilon}$
(17) $W_{\alpha\beta\gamma\delta\epsilon}$ $q_{\alpha\beta}$ $u_{\alpha\beta}$

[illegible]

(18) *Խորհրդացի, Գ. ԿԱ.*

նակակիցներու և յաջորդներուն տուած վկայութենէն աւելի՝ ինչպիսի են խոնա-կան, աստուածաբան, քաջ վարդապետ և այլ նմաններ, իրեն իսկ վարդապետա-կան խօսքերն են որ կը վկայեն, ինչպէս որ կը կարդանք Նղիշէի և Փարպեցիի մէջ, հանգերձ բժշկական հնարքներու վրայ առասպելներով առ իւր դատաւորն և եր-գիծանող¹⁹։ Եւ ամէնքէն աւելի՝ ատենա-կան վկայութիւնը՝ չարալեզու իր թշնամ-ւոյն Դենշապուհի, որ արձագանգ մ'է Պարսկաստանի մէջ իր համբաւին, թէ «քրիստոնէից օրէնքին լիայ քեզի պէս տե-ղեակ մէկը»²⁰։ և դարձեալ, անոր խրատէն զրդուած համարելով ուրիշները՝ Պարսից թեւադրութեան ընդդիմանալու, երբ յի-մարաբար կը յորդորէր Դենշապուհ թէ անոր յորդորներուն ալ եւս մտիկ չընեն։ Այսպէս իրմէ առաջ ալ անոր համախոհը՝ աւելի խորագէտ Միհրնեսուհի, այն մտքով աշխարհակորոյս²¹ կ'անուանէր Ղեւոնդը, այն որ անհրաժեշտ հարկ եղած ատեն՝ զիտէր և կը սորվեցնէր, տէրունական հրամանին համաձայն, աշխարհի կորուս-տեամբ իսկ շահիւ իր հոգին, և իրօք կորսնցնելով ի Զրադաշտ՝ կը շահէր ի Գրիստոս մեր աշխարհը, որ վայրկեան մը երկուքին մէջ կը տատանէր։ Վզըրկին և դատաւորին իմաստակութեան նման «բոլոր Պարսիկները առաւելապէս երանելի Ղեւոնդը խրատու և պատճառ կը նկա-տէին Վարդանի քոյրը ըրածներուն և ինչ որ նոյն ժամանակ Հայոց աշխարհին մէջ գործունեցան»²²։ — Ստոյգ է որ ճշմարիտն ըսիք, ով ստութեան շատագոյններ, և շնորհակալ ենք ձեզի պարսկներուդ, որ միաբան կը հաստատէք մտերիմներու վկայութիւնը, թէ եւ ատենութեան զրդու-մով։ Շատ լաւ ճանչցաք Ղեւոնդիոսը՝

(19) Նղիշէ, 303 ըստ տպ. 1864ի.

(20) Ղ. Փարպեցի, 297.

(21) Նոյն, 240.

մասնակից և ձեռներէց այն ամէն ուղիղ և արիական գործերու որ կատարուեցան Հայոց ոստանին, եկեղեցւոյն և բանակին մէջ Ե. դարու կէսէն քանի մը տարի առաջ և վերջը, ուր իբրեւ ներգործիչ և շարժիչ բազմամասնեայ մեքենայ կ'երեւի եռան-դուն Վանանդացին. այն օժեալ ձեռքը՝ որ երբեմն բնական զօրութեամբն ալ բար-ձրացած կ'երկարէր հերքելու և վանելու սուտ պաշտօնեաները և սնտոի պաշտա-մունքը²³։ Սակայն ձեռքէն աւելի լեզուն կար հզօր զրդիչ և հաղորդիչ, նման երկսայրի հրեղէն սուրին՝ երեւցած Տեսա-նողին, Պատմոսի մէջ, սքանչելի Որդւոյ մարդոյ բերնին մէջ, լեզու՝ մարդուած և՛ բնատուր և՛ գերագոյն արուեստով, միտած հոգւոյն և սրտին հիւթով, որով ամէն դէպքերուն հնարքներ կը ճարէր, և ազդու ներշնչումով արտասանուած ամէ-նուն սիրտը կը շարժէր, իր համախոհները՝ վառելով և մղելով պատշաճ և պանծալի գործերու, իսկ հակառակորդները՝ ապշե-ցնելով և շփոթելով։

Եթէ բախտը թոյլ տուած ըլլար որ մեզի հասնէին իր ինքնագիր ճառերը, անշուշտ պիտի նախադասուէր ան ոչ միայն երեք վերոյիշեալ վարդապետներէն, այլ մեր վերձանող և ճարտասան վկայուածներէն, Մամբրէէն, Եզրասէն, Խոսրովէն, և նման-ներէն. սակայն բաւական կը համարիմ իր նկատմամբ և իրմէ աւանդուած խօսքերը՝ անուանելու համար զինքը՝ եթէ ոչ ուրիշ Ոսկեբերան մը, այլ թերեւս Հրաբերան։ Եւ որովհետեւ չկան իր գրուածքները՝ միթէ պիտի գլանանք իրեն այս կամ ուրիշ պատշաճ անուն մը. ահա բնաւ բան մը չենք գիտեր իր թարգմանիչ ընկերներէն միոյն՝ Եզրաս Սնգեղացւոյն վրայ, և ճար-տասան կ'անուանենք, և այն որ թարգ-

(22) Նոյն, 304.

(23) Նղիշէ, 98.

մանիշներէն քիչ տարիներ առաջ Յոյնե-րու մէջ փայլեցաւ, իրենց իսկ լեզուով Բրոյիբես (կամ Փառեբես) Հայկազն, միթէ Բրոյիբես (կամ Փառեբես) չկոչուեցաւ, րազաւոր ճարտասաններու չկոչուեցաւ, հե-Գրիգոր Աստուածաբանէն գովուած, հե-Թանոս ականաւոր հեռտորներէն վկա-յուած, մեծն Հռոմայ և Աթէնքի մէջ պատուական անդրիով պատուուեցաւ, և ոչ ոք կը ժխտէ անոր քաջութիւնը, փառքը, թէ եւ ցանկալի ճառերը վայելած չըլլայ։ Անկա իմաստութեան մայր՝ Աթէնքի մէջ և Եւլագայի դուստրերուն մօրմէն. իսկ մեր Ղեւոնդի հրեղէն լեզուն ուր ձուլուած ձեւացաւ. արդեօք իր հայրենի Վանանդի, թէ Միլիտինէի կամ Բիւզան-դիոնի մէջ. — ոչ մէկ տեղ, կամ ոչ այն-քան ուրիշ տեղ, եթէ ոչ նախ սրտին հնոցին մէջ, սիրտ զօրաւոր և ընդարձակ, քաղցր և ահեղ, հաւասար հետեւող ճոխ և հանճարեղ իր մտքին, նախասահմա-նուած հրաւիրելու և յորդորելու մեծ ա-րարքին, սաստիկ տագնապեալ թագա-մը մէջ, երբ հեռացուած տեսանք թագա-ւորը և քահանայապետը, որու համար տանը երկու ղեկավարները, որու համա-ալ «վրդովեցաւ խաղաղութիւնը, արմա-տացաւ անկարգութիւնը», կ'ըսէ Խորե-նացի իր Ողբին մէջ։ Կային, այո՛, տա-

կաւին եթէ ոչ թագաւորազուններ, գէթ մեծ իշխաններ, փառաւոր նախարարներ, ռազմագէտ զօրավարներ, քաջ զինուոր-ներ, և եթէ չկար քահանայապետը՝ որ յիսուն տարի կը հաստատէր Հայոց եկե-ղեցին և անոր հոգին կ'ըլլար, սակայն կային իր ձեռնասուն և իրմէ ձեռնա-զրուած հոգեկց աշակերտները, աշխարհ-ներու և զաւառներու եպիսկոպոսները, շատ մը քորեպիսկոպոսներով և երէցնե-րով, որոնք Շահապիվան և Աշտիշատ համախմբուելով ցոյց տուին յայտնապէս թէ մարած չէ ճրագը, և իրենց երկու կեանքի սերմը չէ կորսուած։ Սակայն անհամատ վարդապետներէն ընդունած սրբազաններու ժողովը՝ գերագոյն, հզօր և արբազաններու ժողովը՝ կարօտէր, որ սրբազան զուգի մը կը կարօտէր, որ կարենար իրեն կապել, մանաւանդ թէ աւարտը հայութեան հետ միացնել քաղա-մամբով հայութեան հետ միացնել քաղա-մական, եկեղեցական և զինուորական երեք դասակարգերը, և նորօրինակ եւ ռանկին բանակով մը Հայկին, մղել վանել արգելք և խրտուիլակը ասպարէզէն՝ ազգ մը, զրուած արեւելքի և արեւմուտքի, քրիստոնէութեան և հեթանոսութեան մի-ջասահմանին վրայ։

(Շարունակելի)

